| | | |
|---|---|---|
| | | 'ի արդար վաստակոցն՝ Գերաքին և իւր որդւոցն, ո՛չ որք չունի իշխանութիւն ո՛չ 'ի Գերաքին հայրեննեացն և ոչ 'ի Ծաղիկին հայրեննեացն և ետուն յիշատակ 'ի դուռըն սուրբ Տիրամօր Աստուածածնան՝ բարեխօս լինի Ծաղիկին, Աւետիքին հոգւոյն և 'ի նոցա որդւոցն կենացն և հոգոյն, որէ անհեղ յաւիտեան, Հայրմեր»: |
| 5 | Աւետարան գրչեայ գրեալ 'ի ՌՃԺԵ թւին, 'ի կաթուղիկոսութեան Աղուանից Տ. Պետրոսի, 'ի Թիֆլիս, ձեռամբ Սարգիս վարդապետի: | |
| 6 | Աւետարան գրչեայ՝ գրեալ 'ի թղթի, զոր Աղուէրծու Յովհաննէս քահանայն վախմ տուեալ է անապատի սուրբ Աստուածածին եկեղեցւոյն: | 'Ի վերջ Ղուկասու աւետարանին գրի „Գրեցաւ ՌՃԽԷ թվ." ըստ յիշատակարանին, «'ի ՌՃԾԸ թըվին Աղուէրծու Յովհաննէս քահանայն վախմ ավեց սուրբ Աստուածածին եկեղեցւոյն անապատին»: |
| 7 | Բուրվառ արծաթեայ: | |
| 8 | Գաւազան եկեղեցական արծաթ գլխով մի հատ: | Յիշատակ Շամախեցի Վարդանի, որդի Սիմէօնին, յամին 1776. |
| 9 | Թագ եպիսկոպոսական ոսկեթել ասեղնագործ՝ Յարութեան Աստուածածնի պատկերօք՝ զարդարեալ կանաչ, կարմիր ակամբ. | Զունի յիշատակագիր: |
| 10 | Թագ եպիսկոպոսական ոսկեթել ասեղնագործ մարգարտաշար զարդուք և ակամբ զարդարեալ, Խաչելութեան և Աստուածածնի պատկերօք, 'ի գլուխն փոքրիկ խաչք: | Յիշատակ Աստրախանայ սուրբ Աստուածածին եկեղեցւոյ ժողովրդոց ընդ ձեռն առաջնորդ Բարսեղ վարդապետի, 1745. |
| 11 | Եմիփորոն եպիսկոպոսական խաս դիպակ մի հատ. | |
| 12 | Խաչ արծաթեայ մեծադիր, ոսկէ- | |